

Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի  
«20» հունվարի 2020 թ. թիվ 141 նիստում  
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն  
Ա. Սարգսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ  
ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթուղթը նկարագրում և սահմանում է ԳԿՄԿ ընդհանուր տեսլականը, նպատակները, խնդիրները և դրանց իրականացմանն ուղղված հիմնական գործողությունները՝ Կենտրոնի գործունեության միջազգայնացման վերաբերյալ, որը բխում է ԳԿՄԿ ռազմավարությունից (այսուհետ՝ ռազմավարություն): 2019-2023 թթ. ԳԿՄԿ միջազգայնացման ռազմավարությունը ենթադրում է Կենտրոնի գործունեության բոլոր բնագավառներում միջազգային ուղղվածության ապահովում, միջազգային համագործակցության խթանում, ուսանողների և դասախոսների համար բազմամշակութային միջավայրի ապահովում:

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը, իբրև հետազոտական ուսումնական հաստատության նախատիպ, ազգային և տարածաշրջանային դերակատարությամբ գիտակրթական և ուսումնահետազոտական հաստատություն է, որի հիմնական առաքելությունն է խթանել երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն ու միջազգային կրթական ու հետազոտական տարածքին ինտեգրումը, ապահովել որակյալ ու մրցունակ կրթություն՝ հետազոտական բաղադրիչի շեշտադրմամբ,

